Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Սարալանջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ–ի կերպարվեստի (2 դասաժամ), հասարակագիտության (9 դասաժամ), պատմության (8 դասաժամ) ուսուցչի թափուր աշխատատեղի համար

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:
Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվում է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝
1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափսի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Փաստաթղթերը պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից՝ 2023 թ.-ի դեկտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10:00-ից 15:00-ը: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2023թ. դեկտեմբերի 8-ին ժամը 14:30-ին Սարալանջի միջնակարգ դպրոցում: Հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, գ. Սարալանջ:
Տեղեկությունների համար զանգահարել (098) 38-68-50 հեռախոսահամարով: